



0084, Армения, Ереван, ул. Зор. Андраники 1  
Тел: 72 00 10 Факс: 72 01 21

Zor. Andranik st. 1, Yerevan, Armenia, 0084  
Tel: 72 00 10. Fax: 72 01 21  
E-mail: hvenbec@gmail.com

ՀՀ ԷԼԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ  
ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ԲԱՐՁՐԱՎՈՒՆՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ  
0084 Հայաստան, Երևան, Զոր. Անդրանիկի 1,  
Հեռ. 72 00 10, Ֆաքս. 72 01 21

No. 31-1  
«05» 03 2015թ.

## Հ Ր Ա Մ Ա Ն

«ԲԱՐՁՐԱՎՈՒՆՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԷԼԵՐԳԵՏԻԿ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ 2015թ.  
ԱՄՊՐՈՊԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ, ԴՐԱՆՑ ԱՆԽԱՓԱՆ ԵՎ ՀՈՒՍԱԼԻ ԱՇԽԱՏԱՆՔՆ  
ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ ենթակայանները և էլեկտրահաղորդման գծերը  
2015թ. ամպրոպային ժամանակաշրջանին նախապատրաստելու, դրանց անխափան և հուսալի  
աշխատանքն ապահովելու նպատակով.

## Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ մասնաճյուղերի տնօրեններին՝ մինչև 2015թ. ապրիլի 20-ը  
ապահովել ենթակայանների և էլեկտրահաղորդման գծերի գերլարումներից պաշտպանության  
սարքերի վիճակի ստուգումը և դրանց անխափան աշխատանքը ապահովելու նպատակով՝
  - 1.1. Կատարել գերլարման սահմանափակիչների, պարպիչների, շանթարգելների, ինչպես նաև  
դրանց աշխատանքը գրանցող սարքերի աշխատունակության ստուգումներ:
  - 1.2. Ապահովել ստուգայցները՝ էլեկտրահաղորդման գծերի վնասված մեկուսիչների  
հայտնաբերման և փոխարինման, էլեկտրահաղորդման գծերի հողանցումների և  
ամպրոպապաշտպան ճոպանների վիճակի ստուգման համար:
  - 1.3. Ապահովել ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի սարքվածքների պլանային  
աշխատանքների կատարումը:
  - 1.4. Կատարել էլեկտրահաղորդման գծերի վնասվածքի տեղը որոշող և գրանցող սարքերի  
արտահերթ ստուգումներ:
  - 1.5. Մթնոլորտի բարձր կեղտոտվածություն ունեցող շրջաններում կազմակերպել մեկուսիչների  
մաքրումը համաձայն ժամանակացույցերի:
  - 1.6. Մաքրել 110-220կՎ էլեկտրահաղորդման գծերի անցուղիները կարճ միացման երևույթները  
բացառելու նպատակով:

Կատարված աշխատանքների վերաբերյալ մինչև ս/թ-ի ապրիլի 30-ը «Բարձրավոլտ  
էլեկտրացանցեր» ՓԲԸ ներկայացնել ամփոփ հաշվետվություն:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել գլխավոր ճարտարագետի տեղակալ  
Լ. Ադամյանի վրա:

Գլխավոր տնօրեն

Ա. ԱՆԱՆՅԱՆ